ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 72-Ա

«04» ՄԱՐՏ 2022Թ

## ՔԱՋԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ կետով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն», «ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկի միջնակարգ դպրոց», «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2022 թվականի փետրվարի 15-ի /Մ-1334-2022/ / գրությամբ ներկայացրած փաթեթը և Քաջիկ Խաչատրյանի դիմումը.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝**

1. 2022 թվականի մարտի 9-ից Քաջիկ Խաչատրյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2022 թվականի մարտի 9-ից լուծել Քաջիկ Խաչատրյանի հետ կնքած 2017 թվականի մարտի 7-ի N363 աշխատանքային պայմանագիրը:

3/4/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**